

թիւերը ձիւթ է ըրեր ու կը ծամէ: Ճահիճը քաղաք կը շինէ ու անապատը՝ շուկայ: Կը բացագանչէն՝ Եվրեբա՛, նիւթ է ան:

Տօնական օր մըն ալ կը մտածէ եկեղեցիի ու դպրոցի մասին: Իր մտածումին չափ արագ գրեթէ՝ կը կանգնէ տաճարը եւ ուսումնարանը: Ծառի մը ճիւղերուն չափ միութիւններ կ'արձակէ: Օրեր կ'անցնին, մեր *ֆէստիւնը* մատուռին առջեւ կը հայիոյէ ու վարժարանին առջեւ կ'աղօթէ: Իր լուտանքին ու փառաբանութեան մէջ միշտ յափշտակուած քրիստոնեան է: Նոր եզրակացութեան մը հասած կ'ըսեն՝ ոգի է ան:

Սակայն, երբ իր խանութը երթաս, կը գտնես Յրեայ մը, երբ իր ժողովին երթաս, կը գտնես Բիւզանդացի մը, երբ իրեն հետ յարաբերուիս, յաճախ կը գտնես Քիւրտ մը, երբ հրապարակ երթաս, կը գտնես *ճիւղիկիզ* մը: Բայց եթէ իր տունը երթաս, այնտեղ կը գտնես իր լաւագոյն յատկութիւնները: Ու մէջէն չես կրնար ելլել:

*

Հայը, երբ կուսակցական է, կը ճառէ ազատութենէ, երբ չէզոք է, կը խօսի միութենէ: Իբր մարդ՝ անիշխանական է, իբր Հայ՝ ազգայնական: Անգամ մը որ տիրանայ իր հայրենիքին, կրկին անիշխանական կը դառնայ:

Քաղաքական կեանքի մէջ գործազուրկ է, ու գործազրկութեան նպաստ չի տրուիր իրեն: Հայասերներու բարոյական լումաներով կը կառուցանէ սպանիական դղեակներ եւ, անոնց մէջ նստած, կարկանդակներ կ'որոճայ:

Եթէ տարագրուի կամ աղքատանայ կամ երբ աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը իյնայ, շուտով կը գտնէ հացի ճամբան: Փորձէ իրեն նպաստ տալ՝ այն ժամանակ կը ծուլանայ, մոլութենէ մոլութիւն կը գլտորի:

Կարելի չէ ոչ սուրով, ոչ հուրով սպաննել զինքը: Չինքը մեռցնելու միակ միջոցը իրեն նպաստ տալն է:

Կրօնաւորները լաւ գիտեն այս գաղտնիքը ու հայուն վրայ կը վազեն աղէտներէ վերջը՝ տանելով նպաստի, կաթօլիկութեան կամ բողոքականութեան սնտուկներ եւ պարկեր: Հայը լեռան մը վրայ կանգնած ըլլայ, ու միսիոնարը լեռան ստորոտը՝ պարկը բացած, Հայը